



|                                                   |                                       |
|---------------------------------------------------|---------------------------------------|
| <i>Համարը</i> ՀՕ-193                              | <i>Տեսակը</i> Հիմնական                |
| <i>Տիպը</i> Օրենք                                 | <i>Կարգավիճակը</i> Գործում է          |
| <i>Սկզբնաղբյուրը</i> ՀՀՊՏ 1998.02.28/5(38)        | <i>Ընդունման վայրը</i> Երևան          |
| <i>Ընդունող մարմինը</i> ՀՀ Ազգային ժողով          | <i>Ընդունման ամսաթիվը</i> 03.02.1998  |
| <i>Ստորագրող մարմինը</i> ՀՀ Նախագահի պաշտոնակատար | <i>Ստորագրման ամսաթիվը</i> 20.02.1998 |
| <i>Վավերացնող մարմինը</i>                         | <i>Վավերացման ամսաթիվը</i>            |
| <i>Ուժի մեջ մտնելու ամսաթիվը</i> 28.02.1998       | <i>Ուժը կորցնելու ամսաթիվը</i>        |

ՀՀ ՕՐԵՆՔԸ ՀՀ ԷՆԵՐԳԱՀԱՄԱԿԱՐԳԻ ՁԵՌՆԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՄԱՐ ՀԱՐԿԱՅԻՆ ԱՐՏՈՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

Օ Ր Ե Ն Ք Ը

Ընդունված է Ազգային ժողովի կողմից  
3 փետրվարի 1998 թ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԷՆԵՐԳԱՀԱՄԱԿԱՐԳԻ ՁԵՌՆԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՄԱՐ ՀԱՐԿԱՅԻՆ ԱՐՏՈՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

**Հոդված 1.** Հայաստանի Հանրապետության էներգահամակարգի ձեռնարկությունները (ցանկը կցվում է) ազատվում են հարկային պարտավորությունները ժամանակին չկատարելու համար 1997 թվականի դեկտեմբերի 31-ի դրությամբ ավելացված արժեքի հարկի գծով հաշվարկված և չվճարված (չգանձված) տույժերից:

**Հոդված 2.** Էլեկտրական էներգիա իրացնող ձեռնարկությունները (սույն օրենքի 1 հոդվածի ցանկի համաձայն) ազատվում են մինչև 1997 թվականի հուլիսի 1-ը գեղչով վճարելու արտոնությունից օգտված քաղաքացիներին մատակարարված էլեկտրական էներգիայի դիմաց հաշվարկված և չվճարված (չգանձված) ավելացված արժեքի հարկից, ինչպես նաև այդ մասով հաշվարկված և չվճարված (չգանձված) տուգանքներից:

**Հոդված 3.** Սույն օրենքն ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

Հայաստանի Հանրապետության  
Նախագահի պաշտոնակատար,  
Հայաստանի Հանրապետության  
վարչապետ

Ռ. Քոչարյան

Երևան  
20 փետրվարի 1998 թ.  
ՀՕ-193